

Բայց աս ալ կայ որ հիւանդները ամենեին կերակուրէ կտրել պէտք չէ, միայն երբոր վէրք մը և կամ ուռեցք մը ունենան. վասն զի ան ատեն արիւնը նոր խախտաց կամ սննդարար նիւթ չունենալով, շնչառութեան արգելք չընեն: Երբոր մէկը բոլորովին կերակուրէ կտրուի, մարմնոյն մէջ եղած ծծողական զօրութեամբ ճարպը կամ գիրուցը և ամէն տեսակ խոնաւ հիւթերը շարժման մէջ կ'ըլլան, և իր վրայ ընդհանուր տկարութիւն ու ցամաքութիւն մը կու գայ, արիւնը ըզեղին կը զարնէ ու տաքութիւն կը սպտաձառէ, որով խենթութիւն, վերնտուութիւն ու ինչուան մահ կը պատահի:

Հիւանդները կերակուրէ կտրուին ալ նէ, կրնան խմել շաքարոտ ջրեր, օշարակներ, թեթե մսի ջուր, թրթուաշ ջրեր ու նաև հասարակ ջուր:

Օրուոր խառնուածք ունեցող մարդը կրնայ իրեք չորս օր ջուր միայն խրմել ու չտկարանալ. ասով յայտնի կերևնայ որ ջուրն ալ սննդարար է: Պարզը ստեպ խմելու է, բայց քիչ քիչ:

Երբոր մէկը ամենեին հիւանդութիւն չունի, օրերով չափէ դուրս բան ուտելը կամ ամենեին բան չուտելը շատ փաստակար է. և որչափ որ ծով բանողը ուժով ու երիտասարդ ըլլայ, այնչափ աւելի նեղութիւն կը քաշէ: Երեսը կը դեղնի, վասն զի արիւնը կը քիչնայ ու երակները կը քաշուին, աւուրները կը մարմնին ու կը փայլին, շունքը կը տաքնայ, մորթը կը ցամքի, ինչուան մարդուն վրայ ցնորք ու կատաղութիւն ալ կու գայ, և երբեմն կը մեռնի ալ. և աս բաներս հանդիպելու համար իրեք օր ամենեին բան չուտելը բաւական է: Բողջութեան համար շատ օգտակար բան է ատեն ատեն սովորական կերակուրը փափոխել, ու ոչ երբէք մէկ տեսակ կերակուրի մը կապուիլ, ոչ բանջարեղէնի և ոչ մնեղէնի: Երակերայ բանջարեղէն ուտելով մարդս կը տկարանայ. միակերպ մնեղէն ուտելն ալ չափազանց շարժում կու տայ կենդանութեան ու մարդուս կիրքերը

կը սաստկացնեն: Աւտի զարմանք չէ որ եկեղեցին իր նախատես խմատութեամբը տարւոյն այլ և այլ ժամանակները կը սպտուիրէ հաւատացելոց որ պահք պահեն ու ծով բռնեն:

Երբոր ստոյգ է որ երբոր մարդուս մարմինը կը տկարանայ, բարբը աւելի կը կակղնայ, կիրքերը կը հանդարտին, հեղութիւնն ու մարդասիրութիւնը վրան կը տիրեն: Եւ ալ ստոյգ է որ խոհեմութեամբ ու չափաւորապէս բռնուած պահքը, բանջարեղէն կամ կաթնեղէն ուտելը և խմորեալ բնակելիքներէ տա կենալը կը մարեն ան կիրքերն որ կրնան անկարգանալ, և կամ դժուար կը սանձուէին՝ թէ որ միշտ դոյացական ու սաստիկ սննդարար ըլլար մարդուս կերածը:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սարգոսս դանազան իլէժաներու գահ ունէր յաճ յապիտիւնները:

ՍՈՂՈՒՆԵՐՈՒՆ ամենէն մծա ազգը Պարսիկն է, անոր համար ալ մէջերնին շատ տարբերութիւն չկայ, մանաւանդ անոնց որ հարաւային կողմը կը բնակին. բայց Պարսից արիւնը Սրացոց ու շերքեզներուն արեանը հետ խառն է, և գրեթէ ամէն ազնուական պարսիկ վրացի կամ չերքեզ մօրէ ծնած է. ասպ թէ ոչ Պարսից ծագումը թաթարստանէն ըլլալով՝ շատ տղեղ կ'ըլլային:

Պարսիկները գեղեցիկ կազմուածք ունին, ընդհանրապէս լեցուն են, դոյներնին ձիթագոյն սպիտակ է. բայց Շիրազցիները և Վանտահարի բնակիչներն ու հնդկաստանի սահմանները բնակողները աւելի սևորակ են: Պարսից մազն ու յօնքը սև են, ճակատնին բարձր ու ուռած, աւուրնին սև կամ կապոյտ, քթերնին արծուունցն, թու-

1 Տես երես 92:

չերնին լեցուն , կզակնին մեծ և դեմ-
քերնին երկայն . սրունքնին քիչ շատ
աղեղնաձև է , և ասոր պատճառը իրենց
նստուածքին կերպն է . վասն զի նստե-
լու ատեն ոտքերնին ծալլած չեն նստիր ,
այլ ծունկի գալով ոտքերնին տակերնին
առած կը նստին :

Ընդհանրապէս մարուր են , բայց
անախառ , շողջորթ և կեղծաւոր են :
Բնական ուժով են , զօրաւոր և պատե-
րազմասէր . և թէպէտ խառնակեաց ու
ցոփ կեանք մը կ'անցրնեն , բայց քաջա-
ւոր չեն և ընդհանրապէս երկար կ'ապ-
րին : Ախանի և Վազանդարանի բնա-
կիչները իրենց երկրին ցածու-թեանն
ու տափարակու-թեանը պատճառաւ
անդադար ընդհատ տենդ , խլու-թիւն ,
գլխոյ պտոյտ , և ուռեցք կ'ունենան :
Վրե-թէ ամէն Պարսիկ իրեն կենաց
մեծազոյն մասը աչքի ցաւով ու իջուած-
քով կ'անցրնէ . նոյնպէս շատ են-թակայ
են թանչից , մաղձային տենդի և դեղ-
նացառու . այս վերջինս Պարսից սեփ-
հական հիւանդու-թիւն կրնայ սեպուիլ .
ասոնցմէ զատ ուրիշ կարգէ դուրս հի-
ւանդու-թիւն չի տիրեր հոն :

Բանի որ Սահմատ և իւր յաջորդ-
ները Պարսից , Տաճկաց , Լքաբաց ,
Լքիպտոսի ու Պերպերիստանի տիրե-
ցին , ասոնք ամէնն ալ մի և նոյն ազգ
մը կրնան սեպուիլ : Ըստ այլ և այլ
խառն ժողովուրդները նոյն օրինաց և
կրօնից հպատակելով՝ զրե-թէ գծա-
դրու-թեամբ ալ , բարուք ալ մէկմէկու
կը նմանին :

Ըստ ազգաց մէջ , ինչպէս նաև Հը-
րէից մէջ , թլփատու-թիւնը կրօնից մասն
է , և այս սովորու-թիւնը հասարակա-
ծին ու հիւսիսային լայնու-թեան երես-
ներորդ աստիճանին մէջ եղած երկիր-
ներն սկսաւ . այնպէս որ այսօրուան օրս
ալ այս ընդարձակ միջոցիս մէջ աւելի
թլփատեալ մարդ կը գտուի քան թէ
բոլոր աշխարհքիս մէջ : Ըստ սահմա-
նիս մէջ միայն Սիամացիք , Վունքինա-
ցիք , Փեկուցիք ու Ղենք այս սովորու-
թիւնս չունին :

Չին ցամաքին հիւսիսային լայնու-

թեան քսաներորդ աստիճանէն մինչև
երեսունը հինգերորդ աստիճանին մէջ
եղող ժողովուրդները ընդհանրապէս
իրարմէ շատ տարբերու-թիւն չունին ,
շատ կամ քիչ թուի են , չափաւոր գե-
ղեցիկ և բարեկազմ : Ըսոնց մէջ եղած
տարբերու-թիւնները իրենց կլիմային
բարեխառնու-թեանէն ու աւելի դէպ 'ի
հիւսիս եղող ժողովուրդոց հետ խառ-
նուելէն կը կախուի : Իսկ անոնք որ բա-
րեխառն երկիր մը կը բնակին , ինչպէս
են Հայք , Տաճիկք , Ա իրք , Ա ընկուիք ,
Չերքէզք , Յոյնք , և Լքրոպայի զա-
նազան ժողովուրդները , աշխարհքիս
վրայի ամենէն գեղեցիկ , ամենէն սալի-
տակ , և ամենէն բարեկազմ ազգերն
են : Ա ըստ գեղեցիկու-թիւնը գովուած է
մանաւանդ էրիկ մարդկանցը , որ աշ-
խոյժ են , բայց չափազանց ալ գինեսէր
ու անառակ են : Չերքէզի կանայք ալ
գեղեցիկ ու սալիտակ են , բայց յօնքեր-
նին քիչ է : Ա ընկուիլի ժողովուրդն ալ
Ա ըստմէ ու Չերքէզներէն վար չի մնար ,
և շատերը կը կարծեն որ այս իրեք ազ-
գաց ծագումն ալ մէկ ըլլայ :

Տաճկերները խառն ժողովուրդ մըն
են , և ընդհանրապէս ուժեղ , գեղեցիկ
ու բարեկազմ են :

Յոյնք , Լքապոլսեցիք , Աիկիլիացիք ,
Կորսիկացիք , Սարտենիացիք և Սպա-
նիացիք իրարմէ քիչ կը տարբերին , և
գրե-թէ մի և նոյն զուգահեռականին
տակը կ'իյնան . Վաղղիացւոցմէ ու
Լնդղիացւոցմէ աւելի թուի են : Լքբոր
մէկը Վաղղիայէն Սպանիա կ'անցնի ,
հազիւ թէ Պայոննա հասած՝ զարմա-
նայի տարբերու-թիւն մը կը գտնէ այս
երկու ժողովուրդոց մըն-թին գունոյն վրայ .
վասն զի Սպանիացիք աւելի թուի են ,
և կանայք վառվռուուն սուրբներ ունին :

Լքիրիկէի մէջ բազմա-թիւ ազգեր
կան որ այլ և այլ ծագումն ունին , որոնց
արտաքին յատկու-թիւնները իրարմէ
բոլորովին տարբեր են :

Լքիպտոսի կլիման շատ տաք է , և
յուլիսի վերջէն սկսեալ մինչև սեպտեմբ-
բերի սկիզբը Ռեօմիւրի ջերմաչափը
ամենէն զով տեղն ալ զրոյէն միշտ քսաւ

նըչորս , քսանըհինգ աստիճան վեր կ'ըլլայ : Ըստ չափազանց տաքութեանս պատճառը միայն արևուն ազդեցութիւնը չէ , վասն զի նոյն լայնութեան տակի ուրիշ գաւառները այսչափ չափազանց տաք չեն ըլլար , այլ երկիրը ծովուն երեսէն քիչ բարձր ըլլալէն է : Ըստ տաքութեան և երկրինիւրեք ամիս ճախճախուտ ըլլալովը պէտք էր որ Լճիպտոսի օդը վատառողջ ըլլար . բայց փորձը ասոր հակառակը կը ցրցունէ , և Լճիպտացիք երկայն կ'ապրին : Այնչէս գաղղիացին իր Բսորեստանի ու Լճիպտոսի ճանապարհորդութեան մէջ կ'ըսէ .

« Ի ճացեալ ջրոց արտաշնչութիւնը , որ
 « Կիպրոս ու Բղէքսանդրիա մահաբեր
 « են , Լճիպտոս նոյն ազդեցութիւնը
 « չեն ընէր : Բսոր պատճառն ինծի կ'երևայ
 « թէ օդուն սովորական չորութիւնն է . . . : Ըստ չորութիւնը այն
 « աստիճանի է որ եթէ հիւսիսային
 « հովու ատեն բաց տեղ կտոր մը միս
 « դրուի , նոյն իսկ ամառը , ամենեւին
 « չի հոտիւր , այլ կը չորնայ և փայտի
 « պէս կը կարծրանայ : Բնապատեն
 « լուն մէջ այնպիսի չորցած դիակներ
 « կը գտնուին որ այնչափ թեթեւացած
 « կ'ըլլան , մինչև մարդ մը մէկ ձեռքով
 « ուղտի ամբողջ կմախք մը կրնայ վեր
 « ցրնել , » : Բայց ծովեզերեայ օդը ակեի
 « թաց է քան թէ ցամաքայինը . և
 « թէ որ Բղէքսանդրիա ու Բաշիտ (Բօ
 « դէրտ) երկաթի կտոր մը քսանըչորս
 « ժամ օդուն մէջ ձգուի՝ կը ժանգաճա
 « ըրի : Երբորն կամ Լարթոն (սոտայի ած
 « խուտ) ըսուած աղը Լճիպտոս շատ
 « առատ է , բարերը բոլոր անոնցմէ կե
 « լուած են , և խոնաւ ու թաց տեղուանք
 « այս աղը երկայն ասղաձև բիւրեղացած
 « կը գտնուի : Բուսոց կեանքն ու աճումը
 « զարմանալի երագութեամբ կը կատա
 « լուին , բայց օտար բոյսերը հոն շուտով
 « ցեղերնին կը կորսնցնեն : Կենդանիք
 « ալ շատ բեղմնաւոր են , և կանայք ալ
 « շատ անգամ երկուորեակ կը ծնանին :

Երբոս գետը Լճիպտոսին հարաւէն
 « դէպ 'ի հիւսիս կ'ընթանայ , և իւր կա
 « նոնաւոր ու տարեկան առատանալովը

ձգած տղմովը երկիրը կը պարարտացը
 « նէ , և Երբոսի այս աճումը յունիսի վեր
 « ջերէն սկսեալ մինչև սեպտեմբերի վեր
 « ջերը կը տևէ : Ըստ տարին բարեբեր
 « կ'ըլլայ որ տարին որ Երբոսը մինչև քսա
 « նըչորս ոտք կը բարձրանայ և Լճիպտա
 « ցոց մեծ ուրախութիւն կը պատճառէ .
 « իսկ այն տարին սովու տարի է՝ երբոր
 « ջուրը այս բարձրութիւնը կ'անցնի , վասն
 « զի այն ատեն երկար ժամանակ ջուրը
 « երկիրը ծածկած ըլլալով սերմանելու
 « ու հնձելու ատեն չի մնար : Թէ որ ջու
 « րը ինչուան տասնըվեց ոտք բարձրանայ՝
 « դարձեալ սով կ'ըլլայ . վասն զի երկրին
 « մեծ մասը ջրով չի գոցուելուն՝ առանց
 « պարարտութեան կը մնայ :

Երբոսի կանոնաւոր աճման պատճա
 « ւոր կանոնաւոր ու հաստատուն հովերն
 « են որ հիւսիսէն դէպ 'ի հարաւ կը փչեն
 « և միջերկրական ծովուն փոթորիքը ամպ
 « փոխելով՝ Բուսի լեռանց վրայ ու հա
 « պէշնէրու երկիրը կը տանին ու առատ
 « անձրև կը դարձնեն :

Լճիպտոսի բնակիչները չորս գլխա
 « ւոր ցեղ կրնան բաժնուիլ : Բաղինն ու
 « բազմութիւնը՝ Բրապներն են , որ երկու
 « կարգ կրնանք բաժնել՝ երկրագործ Բր
 « րապք և վրանաբնակ Բրապք . այս ետ
 « քինս թափառական ու գող ժողովուրդ
 « մըն է :

Բսոնք երկուքն ալ Բրաբիոյ այլ և
 « այլ կողմերէն եկած են , և իրենց նախ
 « նական գծագրութիւնը չեն կորսնցու
 « ցած . բարձրահասակ են , ջղոտ , ու
 « ժեղ , մորթերնին արևէն սևցած :

Երկրորդ ցեղը՝ Բրապներն են , որ
 « հին Լճիպտացուցմէ կ'իջնան , մորթեր
 « նին դեղնորակ է , դէմքերնին սևած ,
 « աչուրնին դուրս ընկած , թերնին տալ
 « կած ու պրկունքնին հաստ է : Հերո
 « դոտոս հին Լճիպտացուց համար կ'ըսէ
 « թէ սևամորթ ու գանգրահեր էին . որ
 « ըսել է թէ Բփրիկէի ուրիշ սևերուն
 « տեսակէն են եղեր , բայց երկար ատեն
 « Յունաց ու Հռովմայեցոց հետ դաշ
 « նակից ըլլալով առաջին սևութիւնը կոր
 « սրնցուցեր ու խառն գոյն մ'առեր են :

Երրորդ ցեղը Տաճկներն են , որոնց

Հին ատեն Յոյնք՝ Պարթև , Սագգուդ
և Վիլթ անունները կու տային :

Իսկ չորրորդ ցեղը Սէմիւքներն են ,
որոնց ծագումը Լիւիայէն է , և ասոնցմէ
1230^{ին} լիւթարները բանակ մը կազ-
մեցին ու Լագիպտոս մտան , որոնք գե-
րութեան վիճակէն՝ բռնաւոր եղան , և
երկար ատեն զԼագիպտոս կառավարե-
ցին , բայց վերջապէս մեր օրերը Սէմ-
մէտ Լիւի փաշան գրեթէ զանոնք ջըն-
ջեց :

Լագիպտացիք ստէպ աչքի ցաւ կ'ու-
նենան , և կուրութիւնը հոն շատ յա-
ճախեալ է . այնպէս որ հարիւր հոգւոյ
մէջ քսանը բորբոսիկն կոյր են , տասը
միականի ու քսանը աչու ընին կարմրցած
ու աւրուած : Լ.յս հիւանդութիւնը
որ փոխադրական է , մասնաւորապէս
հասարակ ժողովրդեան մէջ շատ կայ .
Լիւորեստան քիչ կը գտնուի , և աւելի
ծովեզերեայ բնակիչները ենթակայ են
այս հիւանդութեանս : Վերեայ թէ
այս բանին գլխաւոր պատճառը հոն
տեղի օդոյն գրգռիչ յատկութիւնն է ,
որ տեսութեան գործարանին վրայ ա-
ւելի կը ներգործէ :

Լագիպտոսի մէջ աչաց կուրութեան
մէկ պատճառն ալ ծաղիկ հիւանդու-
թիւնն է , որ հոն շատ ջարդ կ'ընէ :

Վասիլրէի սովորական հիւանդու-
թեանց մէկն ալ ելեփանդական ըսուած
ախան է , որ հոն դժուարաւ կը բժըշ-
կուի :

Լագիպտոսի մասնաւոր հիւանդու-
թիւններուն մէկն ալ յուլիսի ու օգոս-
տոսի մէջ՝ մարմնոյն դուրս տալն է , որ
կը կարծուի թէ Վեղոսի ջրոյն գէշ
յատկութենէն է , որ մայիսի վերջերը
կը սկսի ապականիլ , և բնակիչները զա-
նիկայ կը խմեն . թէպէտ մարմնոյն այս-
պէս դուրս տալը առողջարար է :

Վարնան միջոցը , որ մեր կլիմանե-
րուն ամառն է , Լագիպտոս մաղձային
թուրական ըսուած տենդը կը տիրէ , որ
երբեմն փոխադրական կ'ըլլայ : Լիւոր
դեղ երկու կամ իրեք ունկի քինա կ'առ-

նուն , թթու և բուսեղէն կերակուր
կուտեն , միս , ձուկն , մանաւանդ հաւ-
կիթ չեն ուտեր : Հոն արիւն առնուլը
գրեթէ միշտ վնասակար է , ինչպէս ու-
րիշ տաք երկիրներ , ուր խառնուածքը
և հիւանդութիւնները գրեթէ ընդ-
հանրապէս մաղձային են :

(ՄԱՅՄԱՅՈՒ ՌԻՐԻՇ ԱՆԳՍՏ)

Ա Ռ Ա Կ

ԱԵԴԴԴ Ե ԽՈՅԴԻԿ :

ԱՌԻԸՏԵԱՅ կանուխ բոյներնին թողած
Արտոյտն ու խոյտիտ մէկ ընկեր եղած՝
Արեւուն պայծառ ճառագայթից մէջ
Կ'ընէին զըւարթ հազար ելեւէջ .
Ձայներնին թողած կ'երգէին հանգարտ
Ինչուան որ համան մէկ դաշտ մը պարարտ :
Ափսոս խեղճերուն , հազիւ թէ ինջան՝
Որսորդին լարած որդայթն ընկան ,
Որ բռնեց դըրաւ մէկմէկ զատ վանդակ
Գիտացէ գիտաց կտիսց պատին տակ :
Արտոյտը կառչած ինչ ընէն ջեյտեր .
Բրածն ալ բոլոր պարապը կ'եղէր :
Թէպէտ խեղճ խոյտիտն ալ շատ նեղայտ ,
Բայց ուրիշ ճարակ չըլլալն իմացաւ .
Ըսկըսու ուտել խըմել ու երգել
Եւ վանդակին մէջ վեր վար ցտաբըտել :
Արտուտին սիրան այս բանըս չէր քաշեր .
“ Ես ըզքեղ , ըսաւ , խենթ չէի կործեր .
” Ասանկ նեղութեան մէջ ինչպէս կ'երգես ,
” Ինչպէս չես ճաթիր աս անիծած տեղս ” :
Ըսաւ ու զարկաւ գլուխը վանդակին ,
Մահը հեռու չէր , փրուուեցաւ գետին :
“ Ափսոս քու խեղքիդ , խոյտիտը կանչեց .
” Թէ որ աււերտանց երգածներնուս պէս
” Հիմայ ալ մէկտեղ ձայնդ ձգէիր ,
” Թէ համբերութեամբ հիմայ կ'ապրէիր ,
” Եւ թէ աւելի լաւ ժամանակուան
” Յոյսըդ կըրնայիր պահել ինձ նըման ” :

